ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՇԱՊԻՆ -ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.1915 Թ. ՀՈՒՆԻՍ
2. ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ
3. ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ
4. ՖԻԼՄԵՐ

ՇԱՊԻՆ -ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ.1915 Թ. ՀՈՒՆԻՍ

Շապին–Գարահիսար քաղաքը գտնվում է պատմական Փոքր Հայքի Սեբաստիա նահանգում՝ Գայլ գետի Ակշեհիսու վտակի ափին: Մինչև Առաջին աշխարհամարտը քաղաքի հայ բնակչության թիվը կազմում էր շուրջ 10,000 մարդ:

1914 թ. ամռանը Շապին-Գարահիսար է հասնում զորակոչի հրամանը, որին հետևում է շուրջ 400 հայ երիտասարդների զինվորագրումը օսմանյան բանակ:

1915 թ. մայիսի վերջերին տեղի են ունենում քաղաքի երևելի հայերի զանգվածային ձերբակալություններ, խոշտանգումներ ու գնդակահարություններ: Հունիսի 2-ին դասալիք փնտրելու պատրվակով Շապին-Գարահիսարը շրջափակվում է մեծաթիվ թուրք ոստիկանների ու զինվորների կողմից. սկսվում են հայերի տների ու ազգապատկան հաստատությունների խուզարկությունները, որոնք ուղեկցվում են թալանով ու կոտորածներով: Հայերը սկզբում փորձում են անհատական դիմադրություն ցույց տալ, սակայն անհավասար պայքարը ստիպում է վերջիններիս դիմել կազմակերպված ինքնապաշտպանության:

Կազմվում է զինվորական խորհուրդ Ղուկաս Տեովլեթյանի (Ղուկաս Աղբար), Վահան Հյուսիսյանի, Հմայակ Գարակյոզյանի, Հմայակ Մարկոսյանի, Գրիգոր Պարոնվարդյանի, Ալեքսանդր Տագեսյանի և Տիվրիկցի Խոսրովի ղեկավարությամբ:

Հունիսի 5-ին քաղաքի հայ բնակչության մի մասը՝ շուրջ 5,000-6,000-անոց զորքը պաշարում է բերեդը, և սկսվում է անհավասար պայքար: Այս ընթացքում թուրք կուսակալ Մումմարը մի քանի անգամ բանագնացներ է ուղարկում բերդ՝ զենքերը վայր դնելու և հանձնվելու առաջարկով: Հայերը որոշում են անձնատուր չլինել և շարունակել դիմադրությունը: Շուտով թուրքական զորքերը, թնդանոթներ կենտրոնացնելով, սկսում են ռմբակոծել հայերի տներն ու դիրքերը:

27 օր տևած ինքնապաշտպանության ընթացքում նշանակելի է մասնավորապես հունիսի 23-ին տեղի ունեցած մարտը, որի ժամանակ 14-ամյա Հմայակ Թևեքելյանն իր կյանքի գնով մարտի ընթացքը փոխում է հոգուտ հայերի: Նա, ռումբը թևի տակ սեղմած, տեղատարափ հրացանաձարկերի տակ խաչակնքվելով, վազում է դեպի բերդի դռան մոտ գտնվող քարայրը, որ դիրքավորված էին թուրքական մեծաքանակ ուժեր: Տեղ հասնելուն պես՝ հերոս պատանին ընկնում է թշնամու

կրակոցներից. վայրկյաններ անց ռումբը պայթում է՝ գետինը ծածկելով թուրքերի բազմաթիվ դիմակներով: Հայ պատանու մահից վրեժով լցված ինքնապաշտպանները հարձակվում և մեծ կորուստներ են պատճառում թուրքական ուժերին:

Հունիսի վերջերին, սակայն, բերդում սննդի ու զինամթերքի պաշարներն արդեն սպառվել էին, և թուրքական հարձակումներին դիմակայելը դարձել էր խիստ դժվար: Զինվորական խորհուրդը Ղուկաս Տեովլեթյանի գլխավորությամբ ժողով է գումարում: Երկար անհամաձայնություններից հետո որոշվում է գիշերով ճեղքել պաշարման շղթան՝ հարևան շրջաններից հնարավոր օգնություն ստանալու, թուրքերի վրա ճնշում գործադրելու և բերդում գտնվողներին փրկելու հույսով:

Հունիսի 25-ի գիշերը 40-50 զինյալներ բնակչության մի մասի հետ ճեղքում են թուրքական դիրքերն ու անցնում լեռները: Հունիսի 29-ի առավոտյան թուրքերը մտնում են բերդ: Այստեղ մնացած բնակչության մեծամասնությունը սպանվում է, կանանց ու աղջիկների մի մասը՝ առևանգվում, քչերին է հաջողվում փախուստի դիմել և փրկվել: Բերդից հեռացածները, թեև չեն կարողանում օգնություն կազմակերպել, այնուամենայնիվ, տարբեր վայրերում պայքարը շարունակելով, զգալի կորուստներ են պատճառում ջարդարարներին:

Այսպիսով, Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը, թեև հաղթական ավատ չունեցավ, այնուամենայնիվ պատմության մեջ արձանագրվեց որպես հերոսական պայքար՝ ուղղված երիտթուրքական իշխանությունների ցեղասպանական ծրագրի իրագործման դեմ:

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՆՁԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՔԱՋՈՒՆԻ ԹՈՐՈՍԻ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
(ԾՆՎ. 1905 Թ. , ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ, ԹԱՄԶԱՐԱ ԳՅՈՒՂ)

Իմ ծննդավայրը՝ Թամզարան, գտնվում է Արևմտյան Հայաստանի հյուսիս-արևելյան մասում, Պոնտական լեռնաշխարհի տարածքում: Մեզ ամենամոտն էր Շապին-Գարահիսար և դեպի Սև ծովի ափի նավահանգիստ Կիրասոն տանող ճանապարհը: Թամզարան փռված էր մի քանի բլուրների վրա՝ շուրջը անտառներ, սարեր, կանաչ բլուրներ, թեք լանջեր: Ջուրն առատ էր: Ներքևում ձորի մեջ հոսում էր ջինջ գետը, որի երկու ափերը զարդարված էին մրգատու այգիներով: Նշանավոր էր մեր Յոթն աղբյուրը, որից գետի պես բոլոր թաղերով հոսում էր ջուրը և ոռոգում այգիները:

Թամզարայի բնակչության մեծ մասը հայեր էին: Վերջին շրջանում հաշվվում էր 280 հայ ընտանիք և մոտ 100 տուն թուրք: Թամզարացիների ավանդության համաձայն իրենց նախնիները գաղթել էին Անիից: Թամզարան ուներ մի շարք եկեղեցիներ Ս. Թագավոր, Ս. Գևորգ վանքը, Ս.Աստվածածին, Գյուտ Խաչ և այլ ուխտատեղիներ:

1896 թ. Սուլթան Համիդի ջարդերից հետո հայերի թիվը նվազել էր: Իմ պապն ու մամս շատ հայերի նման զոհ են գնացել բարբարոսներին: Շատ որբեր էին մնացել: Շատերը թողել հեռացել էին քրիստոնյա երկրներ: Թամզարայի հայերը զբաղված էին արհեստներով, այգեգործությամբ, հողագործությամբ: Բոլոր տեսակի արհեստներով զբաղվում էին միմիայն հայերը: Շուկայում թուրքերն ունեին երեք սրճարան և երկու-երեք աղքատիկ մթերքի խանութ, իսկ Քյոթանյան Ավագենց խանութը շքեղ էր և ամեն

ինչ կգտնեիր: Շապին-Գարահիսարի և շրջակայքի ալյուրը մեր հայերի ալրաղացներում էր աղվում:

Ունեինք աղջիկների և տղաների համար առանձին դպրոցներ: Կարգ ու կանոնը իշխում էր ոչ միայն դպրոցում, այլև՝ մինչև տուն հատուկ շարքերով անցնում էինք փողոցներով՝ լուռ ու մունջ: Մեր տունը բաժանվում էր երկու մասի, կեսում ապրում էին հորեղբորս ընտանիքը, յուրաքանչյուր հարկում երկու սենյակներով: Առաջին հարկը հայրիկիս աշխատանոցն էր: Վերին երկու հարկերը ննջարաններ էր և հյուրասենյակ: Սենյակների պատերից մեկի երկայնքով շինված էին պահարաններ՝ բաժանված տարբեր նպատակների համար, որոնցից ամենամեծում դասավորում էինք անկողինները: Պատի երկու, երեք կողմերում՝ հատակից բարձր, շինված էր տախտակամած, որոնց վրա փռված էին գորգեր, կարպետներ և շարված էին բարձեր: Հենց այդտեղ էլ նստում էին ծալապատիկ: Մեր ժամանակներում չկային աթոռներ ու սեղաններ: Տան ետևի մասում կար ընդարձակ, լուսավոր թոնրատունը, որտեղ օրվա մեծ մասն այնտեղ էինք անցկացնում: Այն խոհանոց էր, ճաշարան, մթերանոց, մառան: Բացի երկու թոնիրներից, պատի մեջ կար օջախ, լվացարան, պահարան, ամբար: Ձմեռն այնտեղ ևս պառկելու տեղ էր: Տան ետևի մասում կար ընդարձակ գոմ և անասնակերի բաժին: Տան երկայնքով կար ոչ ընդարձակ բակ, շատ աշխատանքներ կատարվում էին բակում: Մեր ընտանիքը բաղկացած էր 9 հոգուց: Մենք վեց երեխա էինք: Հայրս՝ Թորոս աղան բարեկիրթ, եվրոպական զգեստով հարգված գրագետ անձնավորություն էր: Մայրս՝ Հայկանուշը Շապին-Գարահիսարի Օզանյաններից էր (Զորավար Անդրանիկի տոհմից): Հայկանուշը, խանում-խաթուն մի կին էր, որ ամեն ինչ գիտեր, բացի հոգնելուց: Մեծ քույրս՝ Ադրինեն, գիտեր կարել, ձևել: Մորս օգնականն էր: Հետո ծնվել էր Տիգրանուհին, որը 13 տարեկան «մանչ-աղջիկ» էր և սիրում էր բոլորի հետ խաղալ: Հետո ես եմ ծնվել: Հայրս ինձ շատ երես է տվել, բայց նաև՝ աշխատանքային դաստիարակություն և իմ անունը դրել է Քաջունի: Հետո գալիս էին երեք փոքր քույրերս: Փոքր հորաքույրս՝ Արմանուշը, մեզ հետ էր ապրում: Նա շատ հավատացյալ էր, օգնում էր այգու աշխատանքներին:

Հիշում եմ մեր վերջին Վարդավառի տոնախմբությունը Թամզարայում: Այդ ի՜նչ խրախճանք էր, ի՜նչ ուրախություն:

Բայց ահա մի օր շուկայից լսվեց թմբուկի ձայն, և մունետիկը հայտնեց, որ Թուրքիան Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ է մտել: Ամեն ինչ փոխվեց: Մեր շեն և

ուրախ կյանքը վերջ գտավ: Սկսվեց զորահավաքը: Ամեն օր քաղաքից եկողները, այդ թվում և հայրս, տագնապալի լուրեր էին բերում հայերի հանդեպ կիրառվող վայրագությունների մասին: Գիշերները հայերի տները խուզարկությունների, փախստականներ, զենքեր որոնելու պատրվակի տակ, կիրառվում էին ծեծ, ջարդ, սպառնալիք, այդ թվում նաև կանանց ու երեխաների հանդեպ: Այդ բոլորը կատարվում էր իշխանությունների թողտվությամբ, գիշեր թե՝ ցերեկ, բոլորի աչքի առաջ: Բացի քաղաքից, նաև լուրեր էին հասնում մերձակա հայաշատ շրջաններում արդեն սկսված կամայականությունների, բռնությունների, անգամ ջարդերի ու թալանի մասին: Մի օր իմացանք, որ Երզնկայի վարդապետը քաղաք գալու ճանապարհին սպանված է թուրքերի կողմից: Արդեն քաղաքում ձերբակալությունները մասսայական բնույթ էին կրում: Ձերբակալում էին աչքի ընկնող մտավորականներին, ազգային գործիչներին, քաղաք և Թամզարա էին բերում զինված ոստիկաններ:

Մի օր հայրիկս, ամեն օրվա պես, գնացել էր քաղաք, իր կտորեղենի խանութը, բայց երեկոյան չվերադարձավ: Եվ ոչ ոք քաղաքից չվերադարձավ: Լուր ստացանք, որ քաղաքի 300 հայ վաճառականների խանութները խուզարկել են, հետո շարք են կանգնեցրել նրանց և տարել բանտ: Նրանց մեջ է եղել նաև մեր սիրելի հայրիկը: Մեր հարևանները և ազգականները եկան մեզ մխիթարելու: Հաջորդ առավոտյան մայրս ինձ վերցրեց, որ գնանք քաղաք՝ բանտում հայրիկին տեսնելու: Բավական ճանապարհ անցել էինք, երբ մեր դեմ ելնող ճանապարհորդները, որոնք քաղաքից էին գալիս, ասացին, որ քաղաք չգնանք, քանի որ՝ «Էրմէնիլերի քեսիյորլար» (Հայերին կոտորում են - թուրք.):

Մենք չգիտեինք ի՞նչ անել, բայց ետ վերադարձանք տուն, քանի որ փոքր քույր-եղբայրները մենակ էին տանը: Հաջորդ օրը, երբ ես գնացել էի, մեր շուկայի անկյունից դիտում էի, թե ինչ է կատարվում ոստիկանատանը. տեսա որ ձեռքերն իրար կապած 8 մարդու բերեցին ոստիկանատուն, հետո մեր գերեզմանատան պատի տակ կանգնեցրեցին ու սպանեցին: Լսեցինք, որ 300 վաճառականներին, այդ թվում և հայրիկիս կացիններով սպանել են հենց բանտում: Լսեցինք նաև, որ Շապին-Գարահիսարի հայերը գիշերով բարձրացել են բերդը և ինքնապաշտպանության դիմել: Մենք սարսափած մտածում էինք, որ թուրքերը քաղաքացիների վրեժը մեզանից կառնեն: Հետո թուրք ոստիկանները մտան մեր թաղերի տները, 15

տարեկանից բարձր տղամարդկանց հավաքեցին, տարին ոստիկանատուն: Նրանք մոտ 400 հոգի էին, որոնց թևերը պարաններով կապած տարան քաղաքի կողմը: Թուրքերից իմացանք, որ այնտեղ ուղարկված ոճրագործների ձեռքով բոլորին սպանել են և լցրել են հորը: Հաջորդ օրը մունետիկը կանչեց, թե բոլոր հայերը թող եկեղեցի մտնեն: Մենք բոլորս ենթարկվեցինք: 23 օր ու գիշեր մնացինք եկեղեցում, մեզ միայն հաց էին տալիս:

Եկեղեցու մթության մեջ ամեն ընտանիք իրար չկորցնելու մտահոգությամբ, իրար սեղմված կուչ եկան մի տեղ: Իրոք սարսափելի էր: Ողբերգական այդ պահին միակ փրկությունը Աստվածն էր: Աղոթում էինք բոլորս՝ մեծ ու փոքր, ամենքն իր տեղում՝ սրբապատկերի առաջ ծնկաչոք:

Քսաներեք օր հետո առավոտ լուսաբացին թուրք ոստիկանները եկան բացին եկեղեցու դուռը և մեզ բոլորիս դուրս հանեցին. շարքով բակից անցանք՝ շուկայի միջով: Թուրք բնակչությունը՝ բոլորը դուրս էին եկել և շարվել շուկայի երկայնքով: Նրանք դուրս էին եկել մեր վիճակը տեսնալու:

Թուրք մեծահարուստ Մուստաֆա Էֆենդիի կինը մոտեցավ մորս, ասաց. «Բաջի, լավ կլինի այդ երկու ջահել աղջիկներիդ թողնես մեզ մոտ, երբ վերադառնաք կրկին ձեզ կվերադարձնենք»:

Մայրս կտրականապես մերժեց: Շարունակեցինք ճանապարհը: Ոստիկանը հաղորդեց, որ մեզ տանում են Դեր Զորում ապրելու: Գիշերեցինք ծառերի տակ՝ վախը մեր սրտում: Հոգնած, ուժասպառ ընկանք գետնին որ քնանանք: Անցանք Աղվանիս հայկական գյուղից, այնտեղ մեզ տեղավորեցին գոմերի մեջ: Հազիվ էինք տեղավորվել կեղտոտ գետնին, հանկարծ ներխուժեց տղամարդկանց մի մեծ ռոմակ: Մտան մեր մեջ և սկսեցին հարսներ ու աղջիկներ առևանգել: Մայրս իսկույն իմ երկու քույրերին պառկացրեց գետնին, և մենք բոլորս թեթև նստեցինք նրանց վրա: Ճիշտ է քույրերս փրկվեցին, բայց հորեղբորս աղջկան, գեղանի Մանուշակին տարան ուրիշների հետ: Այս անսպասելի երևույթը, առևանգվածների մայրերին ու հարազատներին լաց ու ողբի մեջ թողեց:

Առավոտյան մեզ դուրս հանեցին՝ ճանապարհ ընկանք: Հազիվ էինք հեռացել գյուղից, կրկին խուժանները հարձակվեցին մեզ վրա, մտան մեր մեջ, ջոկեցին ու լալով տարան հարսներին ու աղջիկներին: Մայրերն էլ ողբալով շարունակեցին ճանապարհը: Օրվա կեսին մեզ դուրս հանեցին ճանապարհից, բաց դաշտի մեջ

նստեցրին հանգստանալու: Ոստիկաններից մեկը մի ցուցակ հանեց գրպանից, որտեղ նշված էին առավել ունևոր ընտանիքների անունները: Առաջինը մայրիկիս կանչեցին և փող պահանջեցին: Մայրս բացատրեց, թե իրոք փող ունեցել ենք, բայց մնացել է մեր տանը: Մենք մեզ հետ ոչինչ չենք վերցրել, բացի մեր վրայի շորերից: Չհամոզվեցին: Մեկը հրացանը ուղղեց մայրիկիս վրա: Նա վախից ընկավ գետնին: Մեծ քույրս այդ նկատեց, մեջքից արագ քանդեց շորով փաթաթված մանր դրամի կապոցը, տարավ նետեց ոստիկանների առաջ: Մայրիկին գրկեց, բերեց մեզ մոտ: Նա խիստ վախեցել էր: Դրանից հետո մայրս կորցրեց իր աշխուժությունը:

Օրերն անցնում էին, մենք այլևս ուժասպառվել էինք քայլելուց: Կիզիչ արևը մեզ ավելի էր թուլացնում, ջուր չկար, հատկապես փոքրիկները չէին դիմանում: Ճանապարհին ինչ որ գտնում էինք, այն էլ ուտում էինք. զանազան խոտեր, վայրի մրգեր: Մեզանից առաջ այդտեղով անցել էին ուրիշ հայերի խմբեր: Ճանապարհին ամեն տեղ հանդիպում էինք հոշոտված, նեխված կանանց ու երեխաների մերկ դիակների: Այնտեղ տեսանք՝ մայրը և փոքրիկ երեխան մահացած էին, ավելի մեծը՝ մոր կրծքին ընկած դեռ կենդանի էր, գալարվում էր, նվաղած ձայնով լաց լինում: Այդ խղճալի պատկերներին հանդիպելիս անտարբեր անցնում էինք՝ մտածելով, որ մի օր էլ մենք պիտի այդ վիճակին հասնենք: Մայրը՝ տան մեծը, անկարող էր լինում այլևս քայլել, խմբից դուրս էր գալիս, նստում գետնին և այլևս չէր կարողանում վեր կենալ: Եվ եթե այդ ընտանիքի մեջ այլևս մեծ չկար, որը կարողանար ընտանիքի փոքրերին հսկեր, տեր լիներ, շարունակեր ճանապարհը, ապա մնում էին մայրերի հետ՝ բախտի քմահաճույքին: Մարդիկ, սովին, ճանապարհի տանջանքներին չդիմանալով, մեռնում էին: Այդպիսի կորուստների և առևանգումների հետևանքով մեր Թամզարայի տեղահանվածների առաջին խումբը, որը մոտավորապես բաղկացած էր 500 հոգուց, կամաց-կամաց նվազեց: Փոքր երեխաներ ունեցող մայրերի վիճակը ևս ծանր էր, որոնք միշտ մեկ երեխային շալակը կապած էին լինում, մեկին գրկած, մեկ-երկուսի ձեռքերից բռնած քայլում էին ամբողջ օրը: Մեր ընտանիքը բաղկացած էր ութ հոգուց: Երեքը փոքր էին, քայլելու անկարող, որոնց հերթով գրկում էինք մայրս, մեծ քույրս և հորաքույրս:

Օրերից մեկում ամբողջ օրը քայլեցինք: Շոգ էր: Ցանցառ գետի ավազների, քարերի միջով քայլում էինք: Ես ու ինձ նման շատերը հանել էինք մեր վերնաշապիկները և տաբատները, որ թեթև քայլենք: Հանկարծ մեր վրա

հարձակվեցին խուժանները և թալանեցին, խլեցին մեր վրայի շորերը: Մենք մնացինք շապիկ-վարտիքով: Մեզ ուղեկցող ոստիկանները նման արարքներին արգելք չէին լինում: Գետի եզրին, ավազի վրա մեզ նստեցրին: Բարակ ավազի վրա նստած մատներովս խաղում էի ավազի հետ, մեկ էլ մի կարծր բան մատներիս դեմ առավ, դուրս քաշեցի, և ի՞նչ զարմանք, շատ ծանր մի ոսկյա ապարանջան: Ով գիտի մեզանից առաջ այդտեղով արտաքսված հայերից մեկը ինչ հանգամանքների բերումով այն թողել էր ավազի մեջ: Մայրս այն դրեց ծոցը ասելով՝ մի օր պետք կգա:

Քայլելով, քայլելով մենք հասանք Եփրատ գետին: Ահա՝ Եփրատ գետը. մենք էլ կանգնել ենք նրա ափին: Թվում է, թե մեզ այլևս տեղ չկար գնալու: Մենք վախից սարսափած սեղմվեցինք իրար: Գետի աջ կողմում կար ժայռ, մեջը՝ քարայր: Դրանից ներքև քարերը արյունով էին ներկված, մինչև ներքևը արյուն էր կուտակված ու լերդացած: Մեզանից առաջ այդտեղից անցնող հայերի արյունն էր հոսել: Հիմա մենք եկել, հասել էինք այստեղ. մեր արյունն էլ պիտի թափվի և խառնվի նրանց արյունին: Հանկարծ քարայրում երևացին երեք տարօրինակ մարդիկ, թևերնին քշտած, ձեռքերնին թուրեր բռնած: Հենց այդ նույն պահին մեր շուրջը հայտնվեցին նույնպիսի մարդիկ, որոնք մեզ շրջապատեցին և ստիպեցին քարայր տանող ճանապարհով քայլել և բարձրանալ վերև՝ քարայր: Ոչ ոք չշարժվեց. ավելի սեղմվեցինք իրար, կրկին մեզ զգացինք իրական մահվան դիմաց: Ընդհանուր լաց ու գոռում-գոչում: Մեր ձայները մինչև երկինք էր հասնում: Կանայք Աստծուց փրկություն էին խնդրում: Էլ որտեղի՞ց մեզ փրկություն: Մենք մահվան երկու տարբերակի առաջ էինք. կամ՝ կամավոր պիտի նետվեինք գետը, կամ՝ բռնի քշվեինք քարայր՝ դահիճների ձեռքով մորթվելու և նետվելու գետը: Ահա՝ մեկը օրինակ ցույց տվեց: Ընտանիքի մայրը՝ իր շուրջը սեղմած իր երեխաներին, ձեռքերը վերև բարձրացրեց, խաչ հանեց և աղոթելով գոչեց. «Աստվա՛ծ, դու մեզ չօգնեցիր, ահա մենք ինքներս ենք գալիս քեզ մոտ: Մենք անմեղ ենք»: Շատերը հետևեցին նրա օրինակին:

Մայրս մեզ իր շուրջը սեղմած մեզ սիրտ էր տալիս, որ չվախենանք ջրից, որը մեր փրկությունն է լինելու: Հանկարծ լսվեց բարձր ձայնը. «Եասաք դըր» (Արգելված է - թուրք.): Կանգնեցինք. բոլորս ետ՝ քարայրի կողմը նայեցինք: Հիմա այնտեղ ոչ ոք չկար: Դարձյալ ապրելու ցանկությունը զարթնեց: Ետ եկանք: Մինչ այդ, ոմանք կուլ գնացին ալիքներին: Մեզ դարձյալ ճանապարհ հանեցին: Մեր ճանապարհին փռեցին շոր ու պահանջեցին փող գցել՝ նոր առաջ անցնել: Ով փող ուներ, մի բան գցեց,

անցավ: Կրկին դուրս եկանք մեր տանջալի ճանապարհը: Գետի վրա գցված էր կամուրջ՝ երկու կողմերում դռներով, անցումը փողով էր: Մենք եկանք, կանգնեցինք կամուրջի առաջ: Անցնելու համար փող է պետք վճարել: Փող ունեցող այլևս չկար: Անելանելի պահին մայրս եկավ օգնության: Ծոցից հանեց ոսկյա ապարանջանը, բարձր բռնեց վերև: Բոլորը զարմացած նայեցին մորս ձեռքին, թե որտեղի՞ց այդ թանկարժեք առարկան: Նրանով բոլորս անցանք կամուրջից: Մայրս պատմեց, թե ինչպես այդ ապարանջանը հայերին էր եղել, հետո անցավ հայերին և հետո՝ թուրքերի ձեռք: Հոգնած ու հյուծված գետի մյուս ափին նստեցինք հանգստանալու: Նստած ոմանք ողբում էին իրենց հարազատների կորուստը: Մեզ նեղում էր սովը: Շատերն սկսեցին գետեզերքի խոտերն ու թուփերը ուտել: Մայրս մեզ իր շուրջը հավաքած, գրկին՝ փոքրիկ քույրս նվաղած հազիվ էր շնչում, ուտելու բան էր որոնում: Հանկարծ մայրս գրկի երեխան տվեց մեծ քրոջս, վեր կացավ մոտեցավ քիչ այն կողմ հացի նստած ոստիկաններին ու հարցրեց, որ մոտակայքում գյուղ կա՞: Մեկը ցույց տվեց շրջապատի ծառերի կողմը: Ինձ ու հորեղբորս տղային թույլ տվեցին գնալ, ուտելու բան ճարել, այսինքն՝ մուրալու: Գնացինք, և իրոք, մոտեցանք հողաշեն, գետնափոր տներին: Ուրախացանք: Հենց ծայրամասի առաջին տան բակի քարերով դարսված պարսպի առաջ կանգնեցինք: Շունը մեզ տեսնելով հաչեց: Դռնից դուրս եկավ կռացած մի պառավ կին: Շունը ձայնը կտրեց և եկավ մեր դեմ կանգնեց: Ձեռքով մի կերպ հասկացրինք, թե սոված ենք, հաց ենք ուզում: Կինը հասկացավ, մեզ հրավիրեց ներս՝ բակը: Նստեցինք քարե աթոռների վրա, որի առջև կար քարե սեղան: Ինքը գնաց բերեց երկու ամաս մածուն և երկու կտոր հաց: Ի՜նչ ուրախություն, երկնքից իջած հրաշք: Որոշեցինք հացերը չուտել, տանել մերոնց: Կինը նկատեց, գնաց ուրիշ երկու մեծ հաց ևս բերեց և հասկացրեց, որ փոքր հացերը մենք ուտենք: Հացերը ձեռքներիս դուրս եկանք: Ճանապարհին հացերը թաքցրեցինք, որ ոչ ոք չտեսնի, բերեցինք, դրեցինք մայրիկիս գիրկը: Նա հավասար մասերի բաժանեց բոլորին: Մի փոքր կտոր մնաց, կարծեցինք, որ այն էլ ինքը պիտի ուտի: Բայց այն փոքր չափերի բաժանեց, դրավ բերանը, թրջեց, տրորեց ու մատներով հանեց բերանից ու դրեց գրկի փոքրիկի բերանը: Այսպես մինչև վերջին փշրանքը: Ո՞վ կհավատա, սոված մարդը հացը դնե բերանը, համը առնե, այն առանց կուլ տալու նորից բերանից հանե դուրս: Մայրական սերը ամեն ինչից ուժեղ է, այն կդիմանա ամեն փորձության հանուն զավակի:

Հաջորդ առավոտ մենք ճանապարհ ելանք շարունակելու մեր անվերջանալի տանջալից ուղին: Մեր ճանապարհը գնում էր Եփրատի կողքով: Այլևս ջրի նեղություն չէինք քաշում, նրա ափին բուսնող խոտերով սնվում էինք, լվացվում: Արդեն մեր վրայի շորերն ամբողջապես մաշված, պատառ-պատառ էին եղած: Քայլելու անկարող էինք: Հիվանդները՝ նրա ափին նստած, այլևս վեր չէին կենում, մնում էին այնտեղ: Լինում էր այնպես, երբ մեծահասակ կանայք, չափահաս աղջիկներ ու հարսներ, հետագայում թուրքերի ձեռքը չընկնելու համար, երեսները խաչ էին հանում և նետվում էին գետը: Այնպես որ, մեզ հետ եկող շատ ու շատ ընտանիքներ, ամբողջ կազմով կամ որոշ անդամներ այլևս չկային:

Մայրս մեծ ջանքեր էր գործադրում մեզ ամեն տեսակ փորձանքներից զերծ պահելու համար: Նա ընդամենը 36 տարեկան էր, առողջ, գործարար, տոկուն կին էր: Երբեք չէր հիվանդացել, բայց արդեն սպառվել էր, հյուծվել, ինչպես և մենք բոլորս: Քայլելու անկարող էինք: Մենք զգում էինք, որ գնում ենք դեպի անխուսափելի մահ: Մահ, որը նախօրոք ծրագրված էր թուրքերի կողմից ողջ հայությանը վերջնականապես բնաջնջելու համար:

Տղամարդկանց նախօրոք չեզոքացրին. բոլորին ձերբակալեցին, թևերը կապած տարան, մեր աչքերի առաջ սպանեցին: Կանանց ու երեխաներին քշեցին ամայի վայրեր: Մարդկանց աչքերից հեռու, անլուր տանջանքների, սովի ենթարկելով՝ հալվում էր ողջ հայությունը:

Հետո մեր ճանապարհը թեքեցին դեպի ձախ, դեպի դարնիվեր: Դժվար էր բարձունքը հաղթահարել: Արևից տաքացած գետնի շեկ հողը, փշերն ու չորացած բույսերը ավելի էին դժվարացնում քայլելը: Վերջապես հասանք բարձունքը, որտեղից ներքևի դիմացը մեր առջև բացվեց Ակն հայկական քաղաքը: Մենք ուրախացանք, որ գոնե ուտելու մի բան կգտնենք, թեկուզ մուրալով, որի համար այլևս չէինք ամաչում, ստիպված պարզում էինք մեր ձեռքը: Ակնի հայությանը մեզնից առաջ քշել էին դեպի անապատները: Մենք տեղավորվեցինք ծառերի տակ, բայց ծառերի վրայի մրգերը արդեն քաղված էին մեզնից առաջ անցնող աքսորականների կողմից: Այնպես որ, մեզ ոչինչ չէր մնացել: Միայն թութի ծառերի տակ թութի թափված և չորացած, չամիչ դարձած քաղցր Ակնի հայտնի թութը մեզ կազդուրեց: Մենք առատորեն կերանք, վրան ալ ջուր խմեցինք և համատարած փորհարիքով հիվանդացանք:

Մենք՝ երիտասարդներս, դուրս եկանք շուկա։ Վզներս ծռած, ձեռքներս երկարած կանգնում էինք խանութների առաջ. ոմանք մի բան տալիս էին, ոմանք զայրացած մեզ վռնդում էին։ Ո՞ր մեկին տային։ Փողոցները բազմաթիվ որբացած հայ տղաներ ու աղջիկներ թափառում էին։ Ոստիկանները այդպիսիներին բռնում էին, առողջներին թուրքական որբանոց էին տանում, թրքացնում, իսկ տկարակազմ հիվանդներին տանում, կամրջի վրայից գետն էին գցում։ Հետագայում այդ նկատելով՝ մեր ծնողները այլևս չէին հեռացնում մեզ իրենց մոտից։ Սակայն մինչ այդ, թութն իր անբուժելի հետևանքն էր թողել։ Ամեն օր մի քանի մահացողներ էին լինում։ Հատուկ մարդիկ ամեն օր առավոտները երկար ձողերը ձեռքներին, ծայրերին կեռ երկաթներ ամրացրած, մեռածների շորերից բռնեցրած, քաշում տանում էին ներքև և գցում էին գետը։ Դա լինում էր ամեն օր՝ մեր կողքին։ Մենք տեսնում էինք ու վախով մտածում, որ շուտով մեզ էլ նույնը պիտի անեն։

Այդ օրերին Թամզարայից բերեցին երկրորդ խումբը։ Տեղավորվեցին մեր կողքին։ Նրանք ևս նույնպիսի տառապանքներով անցել էին։ Երկու կողմի հարազատներ, բարեկամներ, իրար գտնում էին քայքայված, ողբալի վիճակում, լացում, տխրում՝ լսելով կորուստների մասին։ Նրանց մեջ էր նաև մեծ հորաքույրս, որը եկավ, մեզ գտավ։ Նա անճանաչելի էր դարձել, շատ վիշտ էր տեսել։ Կորցրել էր երկու եղբայրներին և երկու չափահաս տղաներին, մնացել էր միայնակ։ Եվ եկել էր, միացել հորեղբորս ընտանիքին, որի երկու աղջիկներին թուրքերը առևանգել էին։ Նա լսեց նաև իր եղբայր Կարապետի մահը, որի գերեզմանը Եփրատ գետը եղավ։ Լսելով մեր անհուսալի, քայքայված, տխուր վիճակը՝ նա կուրծքը ծեծում ու լաց էր լինում։

Քսան տարի առաջ ևս, երբ 1895 թ. հոկտեմբերին քաղաքի թուրքերը հարձակվել էին հայերի վրա, սպանել էին հորաքրոջս ծնողներին (իմ պապիս և մամիս), որից հետո 2 քույր և 2 եղբայր անծնող էին մնացել։ Ինքը՝ հորաքույրս, նոր ամուսնացած, երբ տեսնում է այս բոլորը, երկու փոքրիկ տղաներից մեկին ինքն է գրկում, մեկին՝ իր ամուսինը, կանգնում են տան շեմին, որ թուրքերը տեսնեն երեխաներին ու խնայեն։ Բայց թուրք հարձակվողներից մեկը ճանապարհ հարթելու համար, որպեսզի ներս մտնի, դանակով խփում է ամուսնու սրտին, որը երեխայի հետ մեկտեղ գլորվում է գետնին և անմիջապես մեռնում, իսկ չորս տարեկան երեխայի երկու ոտքերը կոտրվում են։ Այդ օրվանից հետո նա մեծանում է երկու ոտքերից զրկված։ Մի քանի ժամ տևող այդ ջարդն ու թալանը հրամանով դադարեցվում է…։

Այսպիսով, Թամզարայի բարեկեցիկ հայությունը աղքատանում է, և շատ հայ ընտանիքներ թողնում են իրենց հարազատ ծննդավայրը և գնում են ուրիշ երկրներ: Այնպես որ, վերջում Թամզարայում մնացել էր հազիվ 250 հայ ընտանիք: Հորաքույրս պատմում էր իր ընտանիքի անցյալը և նաև իր ներկան, որ իր մի տղային տանում են իբր թուրքի բանակ, բայց ճանապարհին սպանում են, իսկ մյուս տղան, որ ոտքերից անզոր էր քայլել, թուրքերը նրան հենց անկողնում սպանում են: Մայրը երկու օր որդու դիակի վրա լաց է լինում: Հետո մտածում է նրան թաղել, բայց ոչ մի հարևան չի գտնում: Ստիպված ինքը միայնակ տան մեջ փոս է փորում, թաղում է իր որդուն և գնում միանում է վանք մտած յուրայիններին, որոնք ևս հետո աքսորվում են: Հորաքույրս պատմում էր ու լաց լինում: Հետո ոտքի ելավ, գնաց, քիչ հետո վերադարձավ ձեռքին շորե մի կապոց, մեջը մի բուռ ալյուր: Ջրի մեջ շաղեց այն, խուս արեց, հետո, մատը թաթախելով, այն հերթով պառկած երեխաների բերանն էր մտցնում: Այսպես՝ մի քանի անգամ, մինչև այն լրիվ վերջացավ: Նրանք մի քիչ աշխուժացան: Անգամ մեծը՝ Հակոբը, ելավ, նստեց, նայեց մեզ և շուրջը, բերանը բաց ու խուփ արեց, նորից էր ուզում ուտել: Բայց որտեղի՞ց: Հորաքույրս այս տեսնելով կրկին տխրեց, ընկավ մտքերի մեջ, թեքվեց, գրկեց մեկին, մյուսին, համբուրեց, անունները տվեց. «Իմ աղվորիկ Հակոբի՜կս, Նորա՜յրս, բալիկնե՜րս, ահա հորաքույրը եկել է, ձեր քովն է, ինձի չե՞ք ճանչնար»: Հետո մայրիկիս գրկեց, գրկեց փոքրիկ քրոջս, որը թուլացած հազիվ էր շնչում, սեղմեց գրկին, համբուրեց, գլուխն օրորեց, հազիվ լսելի բաներ շշնջաց, հետո երեխային գետին դրեց, ձեռքով նրա աչքերը փակեց, առանց խոսելու վեր կացավ ու գնաց: Մեզ թվաց, թե ինչ-որ մի տեղից կրկին ուտելու մի բան է բերելու...

Ակնում չեմ հիշում քանի օր մնացինք: Մի օր էլ ոստիկանները եկան, մեզ ոտքի հանեցին դարձյալ մեր դառը ճանապարհը շարունակելու: Դժվարությամբ ոտքի ելանք: Երեք անկարող փոքրիկներին մեծերը շալակեցին, դանդաղ քայլերով իջանք ներքև գետի եզերք, որի երկայնքով ձգվում էր ճանապարհը: Հազիվ մի քանի քայլ էինք անցել, մայրս կանգ առավ: Մենք ևս կանգնեցինք, հավաքվեցինք նրա շուրջը: Նա հազիվ շշնջալի ձայնով ասաց. «Զավակներս, ես այլևս քայլել անկարող եմ»: Խմբից ետ մնացինք և աննկատ մտանք ճամփեզրի թփերի, ծառերի մեջ, որտեղ մնացինք այնքան, մինչև խումբը բոլորովին հեռացավ, դանդաղ քայլերով՝ կրկին բարձրացանք մեր նախկին տեղը: Այնտեղ, բացի մեզնից, կային հատ ու կենտ մնացող ընտանիքներ,

ընտանիքից մնացած առանձին անդամներ, որոնք ծանր հիվանդ լինելու պատճառով չէին կարողացել վեր կենալ և խմբի հետ կրկին շարունակել դաժան ճանապարհը: Նրանք բոլորն էլ կա՛մ լաց էին լինում, կա՛մ տնքում էին: Նրանց մի մասը մահամերձ վիճակում էր: Այստեղ և այլուր արդեն ողջ հայությունը մեռնում էր: Մենք բոլորս, մայրիկի շուրջը բոլորած, նստած լուրջ մտահոգվում էինք նրա առողջական վիճակով: Մեզ համար այլևս պարզ էր, որ նա լրջորեն հիվանդ է: Նա նույնպես այլևս չէր թաքցնում մեզանից: Մի պահ լուռ մնալուց հետո, շատ թույլ ձայնով ու ընդհատումներով սկսեց խոսել. «Զավակներս, ահա, ինչպես տեսնում եք, ես արդեն շատ վատ եմ, մինչև հիմա աշխատում էի ձեզնից թաքցնել, չէի ուզում ձեզ իմ վիճակով տխրեցնել, մինչև այստեղ ձեզ անվտանգ հասցրի բոլոր տեսակի զրկանքների միջով, հիմա այլևս կարողություն, ուժ չունեմ, քանի նստած, պառկած էի, կարծես մի քիչ լավ էի, երբ ելա ոտքի և ճամփա քայլեցի, ոտքերս սկսեցին ծալվել, գլուխս պտտվեց, կարծեցի՝ հիմա կընկնեմ, մտածեցի՝ լավ է այստեղ մնանք, քան՝ առաջ գնալ, ամայի մի տեղ մնալ»: Հետո քույրերիս հետ ցածր ձայնով էլի բաներ մը խոսեց ու լռեց: Երկար ժամանակ չխոսեց, ինչ որ մի լուրջ բանով մտահոգված էր և հանկարծ թեքվեց կողքը նստած մեծ քրոջս կողմը, ականջին մի բան փսփսաց ու երկուսով միասին ոտքի ելան իրենց հետ վերցրին նաև փոքր երեխային՝ քրոջս: Մեզ զգուշացրին, որ նստենք նույն տեղում. «Մենք իջնում ենք գետափ՝ լվացվելու, շուտով կվերադառնանք»: Եվ իրոք, շուտով վերադարձան երկուսով, փոքրիկ քույրիկիս նրանք հանձնել էին Եփրատ գետի ալիքներին, այդ նրան տանջանքից փրկելու միակ միջոցն էր:

Այսպիսով, մեր տան մեծի՝ հայրիկի, կորստից հետո մի քանի ամիս անց նաև կորցրինք մեր տան ամենափոքրիկին՝ քույրիկիս, մեկը՝ թուրքերի ձեռքով, մյուսը հարազատների՝ մոր և քրոջ ձեռքով: Մենք նման երևույթներ շատ էինք տեսել ու հաշտվել և այդ պատճառով հիմա մեր փոքրիկ հարազատի կորստի հանդեպ նույնպես մնացինք լուռ ու անտարբեր: Թե նրան ո՞վ էր գետի ալիքներին հանձնել, մնաց գաղտնիք: Բայց մի բան պարզ էր, որոշումը կայացրել էր մայրիկս: Երկուսով գլխահակ, լուռ ու հուզված եկան նստեցին: Մայրիկս անձայն անմիջապես պառկեց և այլևս ոտքի չելավ: Մենք զգացինք, որ նրա ֆիզիկական վիճակը հետզհետե ավելի է վատանում, նաև հոգեպես վատ է: Նա աչքերը փակ, այլևս չէր խոսում: Այդ օրը անցավ:

Հաջորդ օրը մեզ մոտ եկան երկու հայ կանայք և մեկ թուրք պաշտոնյա: Նրանք շրջեցին, հետո եկան, մեզ մոտ կանգնեցին, ուշադիր մեզ դիտելուց հետո, երբ իմացան, որ հիվանդ պառկածը մեր մայրն է, կանանցից մեկը նստեց մայրիկիս կողքը, բռնեց նրա ձեռքը ու թեքվելով նրա վրա, բարձր ձայնով ասաց.

- Քույրիկ, լսու՞մ ես ինձ: Կառավարությունը այստեղ՝ ձեր մոտերքը, որբանոց է բացել, երեխաներին այնտեղ հավաքում, խնամում ենք, եթե կհամաձայնվես, այս երկու երեխաներիդ տանենք մեզ հետ այնտեղ:

Մայրիկս աչքերը թեթև բացեց, շուրջը նայեց, հետո հայացքը ուղղեց դեպի անծանոթ կնոջ կողմը, թույլ, հազիվ լսելի ձայնով ասաց.

- Հա՛, լավ կլինի փոքրիկիս՝ Հակոբիկիս տարեք, քանի ավելի չէ վատացել, մեղք է, թող լավանա, ապրի: Իսկ մեծիս, Քաջուկիս՝ չէ՛. նա էլ է փոքր, բայց, վերջապես, տղա է: Նա տոկուն է, կդիմանա, թող մնա մեզ՝ քույրերի մոտ. առանց նրան ի՞նչ կլինի մեր վիճակը:

Կինը հավաստիացրեց, որ լավ կլինի, իրենք էլ հայ են, իրենց զավակների պես կնայեն: Արդեն իրենք էլ կորուստներ ունեն:

Այդ ասելով՝ կինը վեր կացավ, եղբորս՝ Հակոբիկի ձեռքից բռնեց, ինձ էլ իրանց հետ վերցրին, տարան, որպեսզի որբանոցի տեղը սովորեմ: Երբ պետք է գնայինք, մայրիկս ձեռքով ինձ կանչեց քովը.

- Տղաս, ճանապարհին եղբորդ կրկնել տուր այն ինչ ես քեզ սովորեցրել եմ: Թող պառկած տեղը նույնպես միշտ կրկնի:

Մայրիկս ճանապարհին միշտ մեզ հիշեցնում և պահանջում էր, որ չմոռնանք մեր անուն, ազգանունը, ում զավակներն ենք և մեր ազգային պատկանելությունը: Նա նկատի ուներ, որ մենք մի օր իրարից կբաժանվենք, կկորչենք, կընկնենք թուրքերի ձեռքը:

Որբանոց կոչվածը մեզ շատ մոտ էր, հայի լքված երկհարկանի տուն էր: Այդտեղ արդեն բավականին երեխաներ էին հավաքված: Կինը մեզ տարավ խոհանոց, ճաշ, հաց տվեց, բայց՝ շատ քիչ: Նկատի ունենալով, որ երկար ժամանակ է ճաշի անսովոր ենք, և ստամոքսներս կարող է վնասվի: Վերջում մի կտոր հաց տվեց մերոնց տանելու համար:

Հետագա օրերին մայրիկիս վիճակն ավելի վատացավ: Նա ուտելիքից հրաժարվեց, աչքերը փակ՝ այլևս չէր խոսում, միայն թեթև շնչում էր: Քույրերս գլխի

վերև տխուր նստած մտածում էին, թե ի՞նչ անեն: Փորձում էին նրան խոսեցնել, բայց նա լուռ էր ու անտարբեր:

Լուսադեմին զարթնեցի: Աշնանային պաղ քամին մեղմ փչում էր, ծառերի տերևները օրորվում էին, նրանց միջից լուսնի շողերը մերթ ընդ մերթ լուսավորում էին մեզ: Վեր կեցա, նստեցի: Մայրիկն անշարժ պառկած էր: Լուսնի շողերը մի պահ նրա դեմքը լուսավորեցին: Դեմքի գույնը փոխված էր: Երկու քույրերս գլխահակ, ձեռքերը խաչած նստած էին նրա գլխի վերևում:

- Ինչպե՞ս է մայրիկը. - հարցրի:

Քույրերս պատասխանի փոխարեն լաց եղան: Կողքին նստած փոքր քույրս թեքվեց ինձ վրա, գլուխը սեղմած կրծքիս՝ հեկեկում էր... Մայրս մահացել էր...: Մենք մնացինք անծնող և այդ պահից կոչվեցինք որբ: Հիվանդ փոքր եղբայրս իրեն տանջող ցավերից ծանր տնքում էր և չկարողացավ իմանալ, որ ինքը մնաց առանց մայրիկի...

Առավոտյան քույրերս մայրիկի վրայի շորերը կարգի բերեցին, մազերը մատներով հարդարեցին, գլխի շորը պատշաճ ձևով կապեցին: Հետո եկան մեռել հավաքողները՝ երկար ձողերը ուսերին դրած: Նրանցից մեկը ձողի ծայրի կեռ երկաթը զարկեց մայրիկի մարմնի վրա և քաշելով տարավ ներքև՝ դեպի գետափ: Մեզանից ոչ մեկը չգնաց նրա հետևից: Ներկա չեղանք մայրիկիս գետ-գերեզմանին հասցնելու արարողությանը:

Երկու օր է, ինչ չէի տեսել որբանոցում տեղավորված Հակոբ եղբորս: Ծանր վշտի այդ պահին, նրան տեսնելու մեծ փափագ ունեի: Սիրտս՝ վշտացած, հոգիս՝ ընկճված, արդեն լրիվ որբացած գնացի որբանոց՝ որբ եղբորս տեսնելու: Գնալուց առաջ քույրերս պատվիրեցին, որ մայրիկի մահը չհայտնեմ եղբորս, որ չտխրի: Գնացի, մտա որբանոց: Այնտեղի երեխաները շատացել էին, փնտրեցի եղբորս՝ չգտա: Հարցրեցի աշխատող կնոջը.

- Մորաքույր, եղբայրս ու՞ր է, չեմ գտնում, անունը Հակոբ էր:

- Տղա՛ս, ուրեմն դու նրա եղբայրն ես, հա՞, տղաս, ան գիշերը մահացավ, առավոտյան տարան գետը գցեցին:

Ոտքերս թուլացան, գլուխս պտտվեց, սեղմվեցի այդ անծանոթ հայ կնոջ կրծքին ու բարձր ձայնով լաց եղա:

- Տղա՛ս, մի՛ լար, հիմա բոլորս ալ հարազատների կորուստ ունենք, վշտի մեջ ենք, բավական է լաս:

- Հապա ինչպես լաց չլինեմ, մայրիկս մահացավ, առավոտյան գետը գցեցին, եկա այստեղ՝ եղբայրիկս տեսնելու՝ նա էլ չկա: Փոքր եղբայրս ծանր հիվանդ է գետինը պառկած, երևի նա էլ կմեռնի: Ես ինչպե՞ս դիմանամ:

- Հապա ես ինչպե՞ս դիմանամ, - ասաց հայ կինը, - ես մայր չե՞մ: Մինչև այստեղ հասնելս երեք զավակներս սովից մահացան, մեկին անթաղ թողեցի ճանապարհին, երկուսին գետը գցեցինք: Հիմա ողջ հայությունն է մեռնում, մենք բոլորս լաց ենք լինում, թուրքերը այսպես կամեցան մեզ՝ հայերիս: Ի՞նչ հանցանքի համար: Հայ քրիստոնյա լինելնուս համար: Աստված նրանց բելան տա: Քալե՛, տղաս, ես քեզ մինչև ձերոնց մոտ կտանեմ:

Ու բերեց, մի կտոր հաց տեղավորեց ծոցս, ու մենք ճամփա ընկանք դեպի մերոնց մոտ:

Ճամփին նա պատմեց, որ իր ամուսնուն ու իր երկու եղբայրներին սպանել են, իրենց էլ մեզ նման քշել են: Երբ հասանք մերոնց մոտ, լալով հայտնեցի եղբորս մահը: Քույրերս և հորաքույրս լաց եղան: Այդ հայ մորաքույրը նստեց մեզ մոտ, սկսեց մեզ մխիթարել: Նա ուզում էր ինձ տանել իր մոտ, բայց ավելի հարմար գտավ, որ ես մնամ մերոնց մոտ որպես պահապան:

Երբ այդ հայ մորաքույրը գնաց, երկու թուրք պաշտոնյա եկան ու կանգնեցին մեր գլխին, սկսեցին քույրերիս դիտել: Նրանք հայտնեցին, որ եթե քույրերս գնան իրենց տները, կազատվեն այդ տառապանքներից: Քույրերս մեզանից չուզեցին բաժանվել և սկսեցին լաց լինել: Բայց մեզ մոտ մնացած հորաքույրս, իբրև մեծ, ասաց.
- Գնացե՛ք, աղջիկնե՛ր, քանի դուք ևս չեք հիվանդացել: Գոնե դուք փրկվեք այս անտանելի տանջանքներից: Տեսնում եք ձեր եղբայրը հիվանդ տանջվում է ցավերից:

Երկու էֆենդիները քույրերիս առան, տարան, ինձ էլ իրենց հետ վերցրին իրենց տեղերն իմանալու համար: Նրանց երկուսի տները մի փողոցի վրա՝ իրար մոտ էին: Փոքր քույրս բաժանվեց: Ես գնացի մեծ քրոջս հետ: Նրանք ինձ էլ տուն տարան, կերակրեցին, ուտելիք էլ տվին հետս, որ հորաքույրիս տամ: Ես վերադարձա:

Հետագա օրերին հիվանդ եղբորս վիճակը ավելի վատացավ: Նա այլևս ոչինչ չէր ուտում, ուզում էր ուտել, բայց երբ փորձում էր ուտել, փորի ցավերից գալարվում էր, գետինն էր մատերով ճանկռտում: Աղիքների ցավից տառապում էր: Հորաքույրս նստած էր նրա մոտ, ձեռքերը գլխին ու կրծքին էր խփում, ինքն էլ չէր իմանում ինչ ճար աներ:

Այսպես օր ու գիշեր տանջվում էր անտանելի ցավերից: Վերջապես մեր կողքին պառկած հիվանդ կանանցից մեկը հորաքրոջս խորհուրդ տվեց՝ նրան տանել գետը նետել, որ ազատվի: Հորաքույրս ստիպված լսեց այդ «խորհուրդը», թեքվեց ներքև, ուզեց գրկել, վերցնել, բայց չկարողացավ ուժ չուներ, ինքը նույնպես ուժասպառ էր եղած: Եղբորս գլուխը առավ ձեռքի երկու ափերի մեջ, ոտքերն ու մարմինը քսելով գետին, քաշելով տարավ ներքև, մինչև գետափ: Ես լալով հետևեցի նրան: Ավազի վրա վար դրեց, ինքը ծունկի եկավ, կռացավ վրան, գրկեց, երեսները համբուրեց, երկու ձեռքերը վերև բարձրացրեց, մտքով աղոթք մրմնջաց, երեսը խաչակնքեց, մի պահ լուռ մնաց ու երկու ձեռքերով եղբորս ավազի վրայից դանդաղ հրեց դեպի ջուրը: Երբ մարմինը ջրին առավ, երևի իջավ ջրի մեջ, մարմինը շարժվեց, ջրից ազատվելու փորձ արեց, չկարողացավ, մինչ այդ ալիքը եկավ եղբորս մարմինը տարավ ափից հեռու: Ջրի մեջ միայն երևաց նրա ձեռքի մեկը՝ վերև բարձրացրած: Ի վերջո, ես տեսա փոքրիկ եղբորս երկու փոքրիկ մատները: Եղբայրս այլևս չկար...: Աչքերս փակած գրկեցի հորաքրոջս և այդպես երկուսով հեռացանք ափից: Մենք այլևս նույն տեղը չվերադարձանք, այն համարելով մեր ընտանիքի դժբախտության վայրը՝ շրջանցելով բարձրացանք վերև, քույրերիս ավելի մոտ մի տեղ գտնելու համար:

Ճանապարհին հորաքույրս՝ թե. «Քաջու՛կ, գնանք որբանոց, տեսնենք մեր ծանոթ մորաքույրը մի գուցե քեզ իր մոտ վերցնի»: Ես հակառակվեցի, բայց երբ գնացինք դռանը, թուրք պահակը մեզ ներս չթողեց՝ պատճառաբանելով, որ ներսը հիվանդություն կա, ամեն օր երեխաներ են մեռնում, տանում գետն են գցում:

Հուսահատ այնտեղից հեռացանք: Քույրերիս մոտիկ պարտեզի մը մեջ տեղավորվեցինք: Ես մրգեր քաղեցի, որ հորաքույրս ուտի: Մի անգամ գնացի փոքր քրոջս տեսնելու: Հազիվ դռան մեջ քույրս երևաց, տան խանումը քրոջս նկատողություն արեց, իսկ ինձ ասաց.

- Գնա այստեղից, ես քեզ քանի անգամներ եմ ասել, որ դուն մոռանաս այդ գավառի լեզուն խոսել: - Եվ դառնալով ինձ՝ բարձր ձայնով բղավեց. - Էլ մեկ էլ էս կողմը չերևաս, այստեղ քեզի ոչ ոք չկա, - և դուռը ամուր փակեց երեսիս:

Այդտեղից ես հեռացա, մտածելով, որ հարազատներից զրկվեցի, բայց ողջ քրոջս տեսնելու իրավունքից էլ եմ զրկված: Բայց մեծ քրոջս մոտ այդպես չէր: Ինձ ներս էին առնում, կերակրում, ուտելիքով ճանապարհ էին դնում:

Մի օր պարտեզներում շրջելիս իմ դեմ ելան մի խումբ երեխաներ երեք ոստիկանների ուղեկցությամբ: Ինձ էլ խառնեցին իրենց հետ ու տարան բոլորիս լցրին մի դատարկ տան մեջ, դուռը փակեցին մեր վրա, գնացին: Մենք մնացինք ներսում թակարդված: Չգիտեինք ինչ անեինք, և նրանք ինչ պիտի անեին մեզ: Մի տղա եկավ մոտս, ձեռքս բռնեց, ականջիս փսփսաց. - Արի փախչենք:

Երկուսով իջանք նկուղ, տեսանք լուսամուտի ապակին կոտրված է: Երկուսով այդտեղից դուրս եկանք, փախանք, թփուտների մեջ թաքնվեցինք շունչներս պահած: Մեկ էլ տեսանք ոստիկանները դարձյալ երևացին մի խումբ երեխաների հետ: Գնացին նախկին բերածներին տանից դուրս հանեցին, մի քանի փոքրիկ երեխաների առանձնացրին և ոստիկաններից մեկը նրանց տարավ այլ ուղղությամբ, մնացածներին երկու ոստիկաններ հանեցին կամուրջի վրա և այնտեղից բոլորին նետեցին գետը: Մենք մեր թաքստոցից տեսնելով այս ամենը, վախից դողում էինք: Մինչև երեկո մնացինք մեր թաքստոցում, երբ համոզվեցինք, որ վտանգ չկա, հետիս տղան գնաց մի ուղղությամբ, ես էլ վերադարձա մեր կացարանը: Բայց հորաքույրս այնտեղ չկար: Շրջեցի շրջապատը, ձայն տվի՝ «Հորաքու՛յր», բայց նա չկար: Չէի հավատում, որ հիմա էլ իմ անուշիկ հորաքույրս, որի դեմքին ծաղիկ հիվանդությունը հետքեր էր թողել և դրա պատճառով չէր ամուսնացել և ավելի էր կապվել մեզ հետ, ահա հիմա նրան էլ էի կորցնում: Հուսահատությունն ինձ պատեց: Մտքերի մեջ գնացի մեծ քրոջս տունը, դուռը խփեցի: Էֆենդին դուռը բացեց, ինձ ներս հրավիրեց և ասաց, որ այսուհետև մնամ իրենց մոտ: Իմ անունն էլ թուրքերենով կոչեց Սուլեյման: Քույրս ինձ համար անկողին պատրաստեց, ինձ լողացրեց, ոջիլիներս մաքրեց, նոր հագուստներ հագցրեց:

Չորս ամիս հետո միայն, այդ օրը անկողնի մեջ քնեցի: Մի քանի օր այնտեղ մնացի, բայց տեսնում էի, որ քույրս շատ տխուր է, հաճախ գալիս էր ինձ փաթաթվում ու լաց էր լինում: Ինձ հայտնի չէր, թե ինչն էր պատճառը: Ես փոքր էի, բաներ կային, որոնք իմ տարիքին հասկանալի չէին: Քույրս չափահաս, գեղեցիկ, գրավիչ աղջիկ էր: Տարիներ հետո միայն ինձ համար հասկանալի եղան այդ բոլորը: Մենք բոլորս կյանքի և ապրելու պայքար էինք տանում, իսկ աղջիկները նաև ունեին իրենց անձի, պատվի պաշտպանության հոգսերը: Մի օր տան տերերը նստած էին ճաշի, քույրս օգտվելով առիթից, ձեռքիցս բռնեց և ասաց. «Քալե փախչինք այստեղից»:

Դուռը աննկատ բացինք ու տնից դուրս, փողոց ելանք և արագ հեռացանք այդ շրջանից: Մենք էլ չգիտեինք, թե հիմա ուր պիտի գնայինք: Դարձյալ գնացինք այն վայրերը, ուր մնում էինք, հույս ունենալով, որ կգտնենք մեզ ծանոթ հայ ընտանիքներին: Ճանապարհին անցանք այնտեղից, ուր մնում էինք հորաքրոջս հետ, բայց նա չկար ու չկար: Մեզ համար հանելուկ մնաց, թե ի՞նչ եղավ մեր սիրելի հորաքույրը:

Ճանապարհին մենք հանդիպեցինք մեզ ծանոթ մի կնոջ: Նրանք Կիրասոնից էին և, որպես արհեստավորներ, կառավարությունը նրանց ետ էր ուղարկում Կիրասոն: Կիրասոնը նավահանգիստ էր Սև ծովի վրա, որտեղով առևտուր էր կատարվում Եվրոպայի հետ: Կիրասոնը մոտ էր Շապին-Գարահիսարին և Թամզարային: Այդ կինը մեզ առաջարկեց իրենց հետ միասին գնալ Կիրասոն և այդ կերպ փրկվել: Բաց մենք մտածում էինք մեր փոքր քրոջը ևս ազատել գերությունից: Քանի անգամներ գնացինք, բայց հնար չեղավ նրան տեսնել: Նրան թողնել այստեղ թուրքերի մոտ և գնալ երկուսով անխղճություն կլիներ մեր կողմից, բայց ստիպված էինք մեկնել, քանի որ նրանք արդեն ճամփա էին ելնում: Քրոջս մեզ հետ տանել չհաջողվեց և դա մեր սրտին շատ մեծ ցավ եղավ:

Մենք յոթը հոգով, երկու ջորի ու մեկ էշով ճամփա ելանք: Անցանք այն վայրերով, որտեղ մենք մնացինք մինչև մեր ընտանիքի լրիվ քայքայվելը: Հիմա այդ վայրերում արդեն ոչ մի հայ չկար: Բոլորին ոտքի էին հանել ու ստիպել կրկին քայլել իրենց ճամփան, իսկ ովքեր չէին կարողացել ելնել ու քայլել, գետն էին նետել: Այս միջոցով քաղաքը «մաքուր էր աղտեղությունից», ինչպես իրենք էին ասում: Եվ այդպես մեր ընտանիքից հինգ անդամներ կորցնելուց հետո, երկու հոգով վերադառնում էինք: Այդտեղից մենք առհավետ բաժանվեցինք մեր միակ ողջ մնացած սիրելի փոքր քրոջից: Մեզ հետ տարանք նրա և մյուս կորուստների սերն ու կարոտը: Կարոտ, որն եղավ մեր ողջ կյանքի ուղեկիցը:

Ճանապարհին ինձ ու քրոջս չարտոնեցին շարունակել, որպես անօրեններ, բայց մեզ ուղեկցող ընտանիքը լեզու գտավ նրանց հետ: Քանի օր հետո, կեսօրին Շապին-Գարահիսարի բերդի տակով մտանք քաղաք, անցանք բերդի տակի հայկական թաղի կողքով, տեսանք այրված, ամայացած տները, եկեղեցին, առևտրական երկու տաղավարները, որոնց մեկի մեջ հայրիկիս խանութն էր գտնվում: Հիմա դրանք դատարկ էին: Մի քանի ժամանակ առաջ այն աշխույժ էր ու մարդաշատ:

Շուկայի այդ մասում էր գտնվում «կազինո» կոչված շինությունը, որը ծառայում էր իբրև հյուրանոց: Մի քանի ամիս առաջ մասսայաբար ձերբակալված հայերի մի մասին լցրել էին այնտեղ և նույն գիշերը բոլորին այդ նույն տեղում սպանել էին: Հենց այդտեղ էլ մենք գիշերեցինք: Առավոտյան ելանք որ՝ գետնին բարակ ձյուն է նստել: Ահա այդ ձյան վրա, կիսաբոբիկ ոտքերով դուրս եկանք դեպի Թամզարա տանող ճանապարհ:

Դեպի հարազա՛տ Թամզարա: Ինչքան գեղեցիկ հուշեր կան այս վայրերի հետ կապված: Ինչպես էինք նշում Վարդավառի տոնը, ահա այն ուռենիները, քարերը, ամեն ինչ նույնն էր, միայն բազմաթիվ հայեր այլևս չկային: Հուշերի մեջ խորասուզված հասանք մեր հայրական տունը: Հիմա այն առանց լուսամուտների ու դռների էր: Թալանչիները քիչ էին համարել լիքը տան եղածը, պատուհաններն ու դռներն էլ էին տարել: Մեր ուղեկիցները շարունակեցին իրենց ճանապարհը դեպի Կիրասոն: Իսկ ես ու քույրս կանգ առանք մեծահարուստ Մուսթաֆա էֆենդիի խանութի առաջ: Նա նստած տեղից վեր կացավ ու զարմացած նայում էր մեր խղճալի վիճակին: Նա անմիջապես մեզ տարավ իր տունը, կնոջը հանձնարարություններ տվեց ու կրկին գնաց խանութ: Կինը նույն խանումն էր, որ մեր աքսորի դուրս գալու ճամփին մորս ասել էր, որ իր երկու աղջիկներին ապահովության համար իրենց մոտ թողնի, բայց մայրս չէր համաձայնվել: Նա լսեց մեր ընտանիքի ճակատագրի մասին, ցավակցեց ու սկսեց խոսել. «Վա՛խ, վա՛խ, այս ի՛նչ զուլում բերին մեզ հետ հաշտ ու խաղաղ ապրող այս ժողովրդի գլխին», - խոսում էր ու աչքերը սրբում: Թուրք կին էր, բայց վերջապես մարդ էր: Նա նույնպես մարդկային խիղճ, սիրտ ուներ: Այս բոլոր արարքների մեջ, ժողովրդի բոլոր խավերը չէ, որ չարիքին մասնակից եղան: Կինը մեզ կերակրեց, լողացրեց, հագուստներ հարմարեցրեց՝ մարդկային կերպարանք ստացանք: Մի քանի օր մնացինք այնտեղ: Հետո Բիյուք աղա անունով թուրք խանութպանը եկավ և ինձ հիշեց: Առավ ինձ տարավ իր տունը, որտեղ ես տեսա մեր տան կահ-կարասիները: Հաջորդ օրը նա ինձ տարավ իր խանութը, որտեղ տեսա իմ հոր գործած կտավների թոփերը, սիրտս ճմլվեց: Բայց լռեցի: Աշխատում էի, գլուխս պահում: Ես մաքրում էի նաև աղայիս գոմը: Մի օր կովերին կիսախավարի մեջ ջուր տալու ժամանակ, կովը իմ ձեռքը սկսեց լիզել: Տեսա մեր կովն էր, որը ինձ հիշել էր ու ճանաչել, իրեն ջուր տվող փոքրիկ տիրոջը:

Այդ ընթացքում քույրս անկախ իր կամքից, քանի որ կամք հարցնող չկար, ամուսնացավ թուրքի հետ: Այն ինչից ինքը խուսափում էր՝ չկարողացավ դեմ գնալ: Տնեցիները զարմացել էին, որ այդքան տառապանքի մեջ քույրս կարողացել էր պահպանել իր անձը, իր պատիվը:

Ես խանութում լավ էի աշխատում, աղան գոհ էր ինձանից, բայց մի օր ինչ-որ հայ հայր ու տղայի ոստիկանը բռնել տանում էր, ես հետաքրքրվեցի, խանութից դուրս վազեցի: Աղաս զայրացավ, ինձ հայհոյեց: Ես արդեն լցված էի, թողի ու դուրս եկա խանութից վիրավորված արժանապատվությամբ: Հետո մարդ ուղարկեց իմ ետևից, բայց ես ետ չգնացի: Ու մտածում էի խեղճ քույրերս ինչպես են ապրում թուրքերի հետ: Բայց դա փաստ էր արդեն: Գնացի հայրական մեր տունը, բայց չկարողացա մտնել, նույնիսկ չգնացի թոնիրի կողքին մորս թաղած մեր հարստությունը գտնելու: Իջա պարտեզը: Գետնին թափված էին հասուն մրգերը: Ինձ թվաց, թե ծառերը, բույսերը ևս լաց են լինում: Վերհիշեցի անցյալ ուրախ օրերի աշխույժը, հարազատներիս, փարվեցի հայրիկիս ձեռքով տնկած ծառերից մեկին, սիրտս լցված լաց եղա...:

Սվազլյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, Վկայություն 99, էջ 245:

ՄԿՐՏԻՉ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
(ԾՆՎ. 1907 Թ., ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ)



Մեր Շապին-Գարահիսարի Քեչեյուդ գյուղում մարդիկ դազգահի վրա թաղիք էին գործում։

Օր մը էկան բոլոր աշխատող հայ տղամարդկանց ջոկեցին, տարին՝ ջամիներ սարքելու։ Հետո ալ եկան մեր մայրերին ու քույրերին տարին Զարայի Ղավախլու գյուղը։ Ժանդարմները մտրակներով անասունների պես քշում էին բոլորին։ Ծերերին, ովքեր չէին կարողանում քայլել, գլուխները մտցնում էին ոտքերի արանքը, կապում էին ու գլորում Զարայի ձորը… Պապիկիս կացնով սպանեցին։ Անտեղեն մեզ տարին Կայաբաշ ըսված բաց տեղը՝ մեծ քարի դոշին…

Հյուսեին անունով թուրք ժանդարմա մը կար, հետը ուրիշներ ալ կային, սկսան ունեցած-չունեցածնիս մեր վրայեն թալանել, աղջիկներուն մեր աչքի առաջ բռնաբարել, հղի կիներուն փորերը ճղել, չծնված մանուկները հանել իրար նետել։ Մեկը մի աղջիկ տարավ, մյուսը մի տղա տարավ. ի՜նչ գտան՝ տարան։

Ինձի տանող թուրքը ինձ քնացրեց իր խանութին մեջը։ Հարցուցի. - Ու՞ր են իմ մայրն ու հայրը։

Ձեռքով ցույց տվեց վիզը, թե՝ մորթել են։ Էդ մարդու տանը տեսա մեր վերմակը, ուրեմն մեր տունը թալանողը էդ մարդն էր։ Մտածեցի փախնել։ Գիշերը փախա։ Գնացի հրապարակը, ուր շատ հայեր կային հավաքված, ըսի. - Ինձի ալ հետերնիդ տարեք աքսոր։

Միտքս հորս-մորս գտնելն էր։ Մարդիկ ինձ պահեցին արաբայի մը մեջ, վրաս ղազան դրին, որ շունչ կարենամ առնել։ Անցանք Դալղոս (Տավրոս) գետը։ Դիվրիկ հասանք, շա՜տ հեռու՝ Զվանեի մոտ, ուր Եփրատն ու Տիգրիսը իրար էին միանում։ Հոն

հայ աղջիկները պար բռնելու պես իրար ձեռք բռնեցին, Դիվրիկի ձորով Եփրատ գետը նետվեցին, որ իրենց չբռնաբարեն։

Էստեղ ոնց եղավ մի թուրք ինձ առավ, էշու վրա նստեցուց, աչքերս կապեց, հոն յոթ ջաղացք կար, էնտեղից տարավ։ Տարավ, աչքերս բացեց։ Տարավ իր գյուղը, իր տունը։ Անոնց ծառան դարձա։ Հոն հանդիպեցի մեր գյուղի Սիրարփիին, ըսի. - Ես քեզի կփախցնեմ։

Մենք մահից չէինք վախենում, մենք թու՛րքից էինք վախենում։ Երեք օր ու գիշեր սալոմների մեջ մնացինք, դաշտերում իրար արցունքներ լիզելով, հատիկներ ուտելով, ապրեցանք։ Ջուր չիկար, դիմացանք։ Մեզ եկան բռնեցին, տարին մեր աղաների տունը։ Այծերը կարածացնեի։ Օր մը այծերը ցորենը կերել էին, աղաս գլուխս ծնկների արանքը խոթեց, սկսեց ծեծել, ես ակռաներով իրեն կծեցի, ինքնապաշտպանությունը լա՛վ բան է։

1919 թ. մի մարդ եկավ իր եղբորը փնտրելու, ինձի տեսավ, ըսավ. - Դուն կերթա՞ս Սեբաստիա։

- Այո՛, կուզեմ երթալ։

Աղայիս խնդրեցի. - Ես չորս տարի աշխատել եմ, աղա՛, ինձի ազատիր։

Աղաս ըսավ. - Կազատեմ. հագուստներդ պիտի հոս թողնես։

Գնացի Սիրարփիին ալ ուզեցի ինձի հետ տանել, չեկավ։

Մարդը ինձի տարավ հայկական որբանոց մտցուց, միսս, այսինքն՝ օրիորդ Կուշմենի մոտը։

Հոնտեղ ինձ լողացրին, հագցրին, ոտքիս մատը ծուռ էր, ոտքիս կոշիկ չէր մտնում, ոտքս բուժեցին։ Հետո նոր միայն 1922 թ. հայերեն այբբենգիմը սորվեցա։ Ամուսնացա։ Ընտանիքի տեր դարձա։ Հայաստան եկանք։

Սվազլյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, Վկայություն 100, էջ 245-246:

ՀԱԿՈԲ ԹԵՐՋՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

(ԾՆՎ. 1910 Թ., ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԱՐ)

Ես արդեն յոթանասունինը տարեկան եմ։ Շապին-Գարահիսարեն եմ ես։ Երբ կդիմադրեին թուրքերուն, ոմանց ջարդեցին, իսկ մեզ նման երեխաներիս տարին թուրքին որբանոցը։ Մեզ մերկացրին, սուրը դրեցին վիզներուս։ Զաբիթը սուրը քաշում է, մոլլան՝ ասում. «Քրիստոնյայի հավատքը թողնում եմ, մահմեդականություն եմ վերցնում»։ Մեզ կրկնել կուտային ադ խոսքերը։ Բայց թուրքական որբանոցի հայ տղաները բոլորն ալ հայերեն գիտեին։ Մեր դասատուն քսան-քսաներկու տարեկան մի սիրուն հայ աղջիկ էր։ Ադ աղջկա հետ մի թուրք հրամանատար է ուզեցել ամուսնանալ, բայց ան երեք անգամ մերժել էր ու ըսել. «Բոք օլուր ըմ, թյուրք՝ օլմա՛մ». այսինքն՝ «Կեղտ լինեմ, թուրք՝ չե՛մ լինի»։ Հրամանատարը այդ որ լսել է, հանել է սուրը, մորթել է ադ մեր սիրուն դասատուին ու հրաման տվել. - Քանի որ բոք էր ուզում դառնալ, տարե՛ք, որբանոցի պետքարանը լցրեք անոր մարմնի կտորները։

Այդ որբանոցում մեզ դաս էին տալիս զինվորության, ասկյար ըլլալու մասին, իրենց կրոնի մասին։ Երեք տարի մնացինք թուրքի որբանոցում։ Հետո ամերիկացին էկավ, որբանոցներուն տեր դարձավ։ Մեզ ալ բերեց Ամերիկա, լավ պահեց, մարդ դարձրեց…

Սվազլյան Վերժինե, Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, Վկայություն 250, էջ 441-442:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



Շապին Գարահիսար քաղաքի համայնապատկերը և բերդը, 1900-ականներ

Ինքնապաշտպանությանը մասնակցած և ցեղասպանությունից մազապուրծ շապինգարահիսարցի մի խումբ երիտասարդներ

Շապին- Գարահիսարի ինքնապաշտպանությանը մասնակցած հայ մարտիկների մի խումբ

Շապին-Գարահիսարի տարազով նկարված ընտանեկան լուսանկար

Շապին-Գարահիսարցի որբեր, Սեբաստիա

Հայոց ցեղասպանությունը վերապրած Շապինգարահիսարցի աղջիկներ

ՖԻԼՄԵՐ

Հանրային հեռուստաընկերության կողմից պատրաստված տեսաֆիլմ 1915թ. հերոսամարտերը. Շապին –Գարահիսար

https://www.youtube.com/watch?v=6KOZiu4sICQ&list=PLIXe-qM1Sei9LHS1rBjSEhrbSEfIANj01&index=3